



ՈՐԱԳԻՐ

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՏՆՏԵՍԸԿԸՆ ԵՒ ԲՆԸԿԸՆ

Գ Ի Տ Ե Լ Ե Ա Յ

Ժ. ՏԱՐԻ ԹԻՒ 23 .

1852

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 .

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն 1

Գ Լ Ո Ւ Ի Գ .

Երևա առած տղայ :

Երես առած տղայ . շատ փափազեղի բան էր ինձի այս ցաւալի նիւթիս վրայ և ոչ իսկ խօսիլ . բայց չեմ կրնար զանց ընել, մասնաւ որապէս այսպիսի գրքի մը մէջ՝ ուր որ խնդիրը իշխանութեան ու մեծարանաց վրան է :

Իշխանութեան ու մեծարանաց մա. հացու թշնամին երես առած տղայն է :

Սէկալ կողմանէ, տղու մը երես

տալը՝ անիրաւիլ է այն մեծարոնացը դէմ՝ որ իրեն բնութեանը յարգը կը պահանջէ, ու այն խնամոցը կողմանէ՝ որ իրեն ապագայ երջանկութեանը հարկաւոր է :

Կան ոմանք որ երես առած տղոց վրայ խնտալով մը կը խօսին . բայց ես ոչ երբէք աս բանիս վրայ խնտայեր եմ, ոչ երբէք երես առած տղայ մը իմ ծիծաղս շարժեր է . ասկէց աւելի անհաճոյ բան չկրնար ըլլալ . ինձի հա.

1 Տես երես 280 :

մար զարհուրելի բան մըն է ասիկայ . զարհուրելի 'ի ներկայն , զարհուրելի յապագայն :

Արդարութիւնն ու ճշմարտութիւնը շատ անգամ նաև աշխարհային խօսակցութեանց թեթևութեան մէջ ալ կը թափանցէ . Սըւիկա սոսկալի արդայ ճշն է , կ'ըսեն երբեմն զուարճալից անհոգութեամբ մը , կամ նաև սնապարծ ուրախութեամբ մը : — Այո՛ . սոսկալի , և թերևս օր մը չուզածէդ ալ աւելի . վասն զի յիրաւի երես առած տղուն վրայ կրնանք ըսել սուրբ Գրոց այն խօսքը “ Առի՜ծին հորիւնը սոսկալի ճշ Դարձաւ , ու օր մը սորվեցաւ Լէ Խնչկէս զճարդիչ պիտի պատահէ ” :

Սանկամարդ կնկան մը հարցուցին թէ բոլոր օրդ ինչ բանի կը զբաղիս : “ Իմ արդոս երես սալու էր զբաղիմ ”, պատասխան տուաւ կնիկը . մտքովը ասիկայ քիչ շատ սրամտութեան խօսք մը կը սեպէր , բայց աս խօսքս իր կարծածէն աւելի ծանր խօսք մըն էր : Ասով ինքը խտուութեամբ կը դատապարտէր այնչափ անխոհեմ մայրերը՝ որ կարծես թէ իրաւընէ ուրիշ զբաղանք չունին , բայց եթէ իրենց տղոցը կենացը բոլոր առջի ժամանակը աւրել . ասով ինքզինքն ալ չարաչար կը դատապարտէր . այս բանս տխուր փորձով մը ինքն ալ իմացաւ այլ շատ ուշ :

Բայց տղաքը , կ'ըսեն , դեռ շատ պզտիկ են . ինչ կ'ելլէ եղեր իրենց երես տալէն . ասիկայ անանկ բան մըն է՝ որ հետեւանք մը չկրնար ունենալ . ասիկայ բանի մը տարուան համար է միայն : — Այն , աստանկ չէ , բոլոր կենացը համար է . նոյն իսկ յաւիտենական ճրջմարտութիւնը աս բանիս բացայայտ պատգամը տուած է . “ Արիտասարդը ծերանալու ալ ըլլայ՝ այն կ'ըլլայ ինչ որ էր իր տղայութեանը ատեն ”¹ :

Շատ կերպերով տղայ մը կրնայ աւրուիլ . իրեն մտքը կ'աւրուի գովեստից անխորհուրդ չափազանցութեամբ մը . իրեն բնաւորութիւնը կ'աւրուի թող

տալով ամէն ուզածն ընել . իրեն սիրտը կ'աւրուի թէ որ վրան չափէ զուրս հոգ տանին , ու զինքը պաշտելու մը պէս սիրեն :

Բոլոր այս կերպերս որով որ տղայ մը կ'աւրուի , այն տխուր արուեստը որն որ կ'անպիտանցընէ այն սքանչելի հասակը՝ որ բոլոր կենաց յոյսն է , երկու վնասակար սկզբունքներու պտուղ են , և բոլոր մարդկային չարութեան աղբիւրները . ասոնք են՝ մեղկութիւնն ու հպարտութիւնն :

Մեղկութիւն բան մըն է բացատրելը թէ մեղկութեամբ աւրուած տղաքը վերջէն ինչ կը դառնան . ասոնք անոր համար աւրուած են , վասն զի խիստ շատ կը փայտայեն զիրենք , դրսէն շատ գութ վրանին կը ցուցնեն , և յօժարութիւննին , փախաբնին , դիտմունքնին , իրենց ծուլութիւննին , ցանկութիւնները , ուզածները կը կատարուին :

Այսպիսիները երբեմն իրացընէ պզտիկ վայրենի գազաններ են : Ասոնք ընդհանրապէս գեղեցիկ , շնորհալից , քաղաքավար ու շողքորթ տղաքներ կ'երևան , ու այնպէս ալ են : Թի՛ք որ քեզմէ բան մը պիտի փրցընեն՝ ամենայն ողորական կերպերը , ու ամէն ախորժելի երևցած ցածութիւնները կը բանեցընեն : Վասնի որ մօտէն չես տեսած ասոնք՝ սիրուն տղաքներ կ'երևան քեզի . բայց մէյմը որ իրենց վարպետութիւնները ու քու տկարութիւնդ իմանաս , մէյմը որ իրենց կամքին դէմ դնես , մէյմը որ պզտի աշխատութիւն մը , թեթև մտադրութիւն մը պահանջես , մեկէն 'ի մէկ երես թթուեցընելը , նեղանալով ու քիթ կախելով լսելը , ու ինչուան նաև բիրտ ու անհնարձք կոպտութիւնը քեզի կ'իմացընեն՝ որ աս սիրելի կարծուած տղաքները մէյմէկ խաբէբայ չարաճճիներ են եղեր . օրոնց բուն սիրտը ընտանեցած կենդանեաց պէս այն խայծերուն միայն զգայուն են՝ որ զլորենք կ'ընտանեցընէ . բայց իրենց ախորժակին դէմ բան մը եղածին պէս՝ կը կատղին ու վայրենի գազան դարձած կը խաճնեն ու կը պատառեն :

1 Եզէկիէլ ԺԹ . 6 : 2 Առակ ԻԲ . 6 :

Թերեւս չափազանցութիւն է ըսածս .
 — Այսպիսի փափուկ հասակ մը կարողութիւն ունի այնչափ չարութիւն գործելու : — Տեսէք թէ աս բանիս վրայ ինչ կը մտածէին Ֆենելոն ու սուրբն () գոստինոս , զիտելու է որ տղայութեան առաջին հասակին վրայ է խօսքերնին . “ Այլէ՛ , կ'ըսէ Ֆենելոն , թէ ”
 ” ինչպէս տղաքը իրենց պզտիկութեան
 ” ատենէն երբոր մէկը հետերնին քաղ-
 ” ցրութեամբ վարուի՝ զանիկայ կ'ու-
 ” զեն . իսկ ով որ վրանին բռնութիւն
 ” մը կ'ընէ՝ անկից կը խորշին կը փախ-
 ” յին . ինչպէս գիտեն թէ ուղած բա-
 ” ներնին առնելու համար երբ պէտք է
 ” պուալ կանչել , և երբ ձայն չհանել ,
 ” և ուրիշ ինչ վարպետութիւններ ու
 ” նախանձներ ունին ” :

“ Տեսայ , կ'ըսէ սուրբն () գոստինոս ,
 ” մէկ նախանձոտ տղայ մը որ դեռ լե-
 ” զու ալ չէր ելած , ինչպէս երեսին
 ” գոյնը նետած ու աչքերը կրակ դար-
 ” ձած կը նայէր հետը մէկտեղ կաթ
 ” ծծող տղուն վրայ ” :

Իրաւ՝ ես պող , խիստ ու գոռոզ բնու-
 թեամբ տղաքները չեմ սիրեր , բայց սա-
 կայն փափկասիրտ , տաքարիւն , կակուղ
 ու շնթող տղաքները՝ թէպէտ և սկրզ-
 բան սիրելի ալ երևան , 'ի վերայ այսր
 ամենայնի իմ աչքիս առջև ասոնք քիչ
 վախնալու չեն , ու իրենց դաստիարա-
 կութիւնը մեծամեծ վտանգներու են-
 թակայ , և որ մեծն է՝ շատ դիւրաւ մարդ
 կը խաբուի . աս բանիս մէջ շատ ան-
 փամ ճարտարներն ալ կը խաբուին :

“ Գիտնալու է , կ'ըսէ Ֆենելոն , որ
 այնպիսի բնութեամբ տղաք կը գրտ-
 նուին՝ որ մարդս վրանին շատ կը խա-
 բուի : Առջի բերան սիրուն կ'երևնան ,
 որովհետև մանկական հասակին առջի
 չորհրդքը պայծառութիւն մը ունի՝ որ
 ամենայն բան կը գոցէ . այնպիսի փա-
 փուկ ու սիրելի կերպեր վրան կ'երևայ՝
 որ չեն թողուր որ մարդ անոնց դէմքին
 դժապրութիւնը բարակ դիտէ ” :

Այսով ինչ կ'ըլլայ . տղայն իրենց
 զուարճութեանը բան մը կը դառնայ ու
 իրենց պարծանաց նիւթ մը . կը սկսին
 զանոնք փայփայել ու թող կուտան որ
 ամէնքն ալ զիրենք փայփայեն , ինչուան
 նաև ծառաներն ու աղախիններն , որոնք
 ցած ու վտանգաւոր շողմանքներով՝ ի-
 րենց աչքը մտնելու համար ամէն խե-
 լուրնուն փչածը կը կատարեն , ու արտը-
 ժելով մը իրենց ամենէն գեշ կլքերուն
 ալ սնունդ կու տան :

Ետ չանցնիր՝ մանկական խաբէա-
 կան դեղեցիկութիւնը կ'անցնի , աշխոյ-
 ժը կը մարի , աւերելոյթ սրտին փափ-
 կութիւնը կը կորսուի , ու մէկէն 'ի մէկ
 վրանին ցաւալի հոգւոյ ցամաքութիւն
 մը ու չարաչար ապականութիւն մը կը
 տեսնուի՝ ու վերջապէս այն սիրուն ե-
 րևցած տղաքները մէյմէկ զարհուրելի
 բաներ կը դառնան . այն ատենը լաւ
 կ'իմացուի , բայց արտոս շատ ուշ , որ մեղ-
 կութեամբ գլխէ ելած տղէ մը աւելի
 խիստ , աւելի չար , աւելի հպարտ , աւե-
 լի սեգ , աւելի անձնասէր , աւելի ապ-
 երախտ , աւելի անիրաւ ու աւելի ատե-
 լի արարած մը չկայ :

Վերեն ինծի ընթերցողք քիչ մը ա-
 ւելի մանրամասն աս նիւթիս վրայ խօ-
 սիլ . ինծի ասկէց աւելի ծանր բան մը
 չկրնար ըլլալ . բայց զթութիւնը , սերն
 ու պարտքս այս բանիս զիս կը ստիպեն .
 ուրիշ բանի համար չէ՝ բայց եթէ աղա-
 տելու համար ծնողքներն , ընտանիքն
 ու նոյն իսկ տղաքները այն ահագին
 թշուառութիւններէն՝ որ իմ հոս տեղ
 ողբացած չարեացս անհրաժարելի հե-
 տեանքներն են :

Այն տկար ու անխոհեմ ծնողքներն
 որ իրենց տղայն ու աղջկանցը նորածին
 կըքերը ու կամապաշտութիւնները ի-
 րենց զուարճութիւնն են , ու անոնց
 տղայական հասակը իրենց զբօսանք մը
 միայն ըրեր են , ինչուան ամէն չափէ
 դուրս բաներ ալ անոնց թող կու տան ,
 այսպիսիները կ'ըսեմ ամենեւին չեն մտա-
 ծած այս բաներս , ամենեւին մտքերնէն
 անցած չէ՝ թէ որ մը ինչեր պիտի չքա-
 շեն աս թշուառ տղայոյ ապերախառ-

1 Դատտ . Աղջկանց գլուխ Գ . երես 2) :
 2 Դաստիար . Աղջկանց երես 90 :

Թե՛նէն ու անսանձ ու կատաղի կըքե-
րէն : Այրանի թէ գոնէ ասկէց ետե լաւ
մը աս բանիս վրայ մտածէին , ու թող
տային որ իրենց բոլոր ուշադրութիւնը
աս ծանր նիւթին վրայ դարձնեն :

Այսոր հարկաւորութիւնը նոյն իսկ
հեթանոսները լաւ հասկըցեր էին . “ Այ-
մենայն բանէ առաջ , կ'ըսէր հին փիլի-
սոփայ մը , տղոց վարքը ժուժկալ ըլլայ .
իրենց զգեստները պարզ ու ընկերներ-
նուն նման : Այի թողուր որ ծուլու-
թեան ու դատարկութեան մէջ իյ-
նան . հեռացուր զիրենք մասնաւորա-
պէս ամենայն տեսակ փափկութիւննե-
րու մերձաւորութենէ . վասն զի ոչ էնչ
այնպէս Բարեխտերք է՝ ընէ զճարդ՝ Ինչպէս Գա-
ժուի ու հնամարդի դաստիարակութիւն
մը : Այիամբ որդւոց վրայ ցուցըցած
ներողամտութիւնը , ու որք տղոց ունե-
ցած համարձակ ազատութիւնը ապակա-
նոթեան մէջէն անհրաժեշտ աղբի-բներ են :
Այնչ կրնայ ըլլալ տղայ մը՝ որուն որ
ոչ ինչ ժխտուած է երբէք , որուն ար-
ցունքները միշտ սրբեր է իր մշտահոգ
մայրը , և վարժապետներուն առջև միշտ
իրաւունք ունեցեր է : . . .

“ Այէտք է տղոցմէ հեռու բռնել
մարդեղուցութիւնը . թող լսեն զճամար-
տութիւնը , երբեմն ճանչնան վախնալ
և միշտ յարգել . մեծերուն պատիւը
պահեն . ու ոչ երբէք իրենց բարկու-
թեան համար կամքերնին կատարուի :
Այն բանն որ իրենց լալու ատենը չկա-
տարեցիր , երբոր հանգարտին՝ այն ա-
տենը կատարէ՝ ” :

Հասարակաց դաստիարակութեան
բազմաշխատ պաշտամանցը մէջ երես ե-
լած տղոցմէ աւելի ցաւալի բան մը չեմ
զտած , ու դաստիարակելու դժուարին .
մանաւանդ թէ պէտք է այս ալ խոստո-
վանիմ որ գրեթէ միշտ իմ ամէն այսպի-
սիներուն վրայ ցուցուցած հոգս ու ջանքս
պարապի գացեր են : Այս տղոց մէջն
ալ մասնաւոր կերպով մը մեղկութենէ
աւրուածները միշտ ու ամէն անգամ ալ
գրեթէ անդարմանելի գտեր եմ :

1 Սենեկայաղագս բարկութեան գիրք Բ . ԳԼ .
ԻԱ . Կրես 49 :

Հպարտութեամբ երես ելածները
երբեմն երկայն տարիներ անհնարին
նեղութիւն տուեր են մեզի , բայց վար-
ժապետաց ձեռնտուութեամբ , ան-
ձնանուիրմամբ ու խորհրդակցութեւր ,
և մանաւանդ մեր միտքը դրած զօրա-
ւոր դաստիարակութեամբ , վերջապէս
ժամանակ անցնելէն վերջը շատ անգամ
զուլս կը հանէինք :

Հպարտութեամբ աւրուած տղաք-
ները իրաւ տխուր տեսարան մը մար-
դուս աչքին կ'ընծայէն , բայց գոնէ
մեղկութեամբ արուածներուն պէս զը-
զուելի չէ աս տեսարանը : Տղուն հը-
պարտութիւնը , իր մատաղ հասակին
բնական պարզութեանը պատճառաւ՝
չկրնար իրեն սրաին ազնուական ու գե-
ղեցիկ յատկութիւնները բողբոլին ա-
պականել : Այս գոռոզ բնութեանց
մէջ գոնէ կը մնայ դաստիարակութեան
մեծ մեծ ճարեր , իսկ ընդհակառակն
մեղկութենէ աւրուածներուն քով՝ ա-
պականութենէ , ախտաւորութենէ ու
վայրենի ու զգայական անձնասիրու-
թենէ զատ բան չգտնուիր :

Այլ թէ որ շիտակը ուզենանք ըսել ,
ասիկայ մտաւոր , բարոյական ու բնա-
կան ոչնչութիւն մըն է : Այնպիսոյն
վրայ կը տեսնես մեղկ անառակութեան
արմատ մը , ուր ամենայն տեսակ գէշու-
թիւն , վատանունութիւն ու բարոյա-
կան թշուառութիւններ բնականապէս
կը բուսնին :

Այլ շատ անգամ սիրտս ցաւով լցուած
կը նմանցընէի զասոնք մատաղատունկ
թուփի մը՝ զորն որ նենգաւոր գետին մը
թունաւոր հիւթերով սնուցած ըլլայ ,
և կամ փափուկ ծաղկի մը՝ որ մնասա-
կար քամիներէ խամբեր է , ու իր բնա-
կան անուշահոտութիւնը՝ ապականու-
թեան ու մահուան հոտ մը դարձած է :

Այսպիսի տղայ մը դաստիարակելու
համար պէտք է զինքը նորէն ստեղծել ,
պէտք է ոչ միայն ուղղել , հապա նորէն
շինել զընութիւնը . ահա քեզի հրաշալի
ձեռնարկ մը , որուն համար պէտք է
ժամանակ , յարատուութիւն , համբե-
րութիւն , հաստատութիւն , խեղճ , որ

քիչ անգամ հարկաւոր եղած չափովը կը գտնուի , և միշտ անբաւական կ'ըլլայ՝ առանց արտաքոյ կարգի Մտուածոյ շնորհացը : Մայիսի նորոգութեան հրաչքը ամենողորմ ու ամենակարող գերբնական ազդեցութիւն մը միայն կրնայ կատարել :

Հիւանդոտ տղայոց վրայ ցուցրցած չափէ գուրս ու աւելորդ հոգն ու ինամքը երբեմն զազաքը ողորմելի կերպով մը կ'աւրեն : Սկայ բան մը որ այնչափ վնասակար ըլլայ աղու մը՝ ինչպէս երկար ա տեն հիւանդութեան մը պատճառաւ՝ հօր մը , մօր մը ու տանը բոլոր ծառայիցը սիրոյն ու ամէն տեսակ հոգերուն խնամքներուն ու զգուշութիւններուն մէկ հատիկ նպատակն ըլլալը :

Բան մը իրեն չէ չըսուիր , ամենուն միտքը ու ամենուն աչքը միշտ իրեն վերայ են . ինքը ամենուն սրտին անհանգստութեանը ու գորովոյն նպատակն է :

Վարձեալ կ'ըսեմ . քան զաս աւելի կարեկցելու բան չկայ . վասն զի գրեթէ անխորշելի վնաս մըն է , բայց սակայն մեծ վնաս ու շտկելու համար երկարատե առողջութեան մը ու զօրաւոր դաստիարակութեան մը կը կարօտի :

Պէտք է գոնէ վտանգը ճանչնալ , ու որչափ որ կարելի է նէ զգուշանալ : Սնանալու է որ այն սիրուն հիւանդին աւելորդ ծառայութիւններ չըլլան , ու միայն այն ատեն իրեն ուղածը կատարել՝ երբոր իրաւցրնէ հարկաւորութիւն կայ , և կամ երբոր խոհեմ՝ սէրը ու արդարացի ինամքը զնոյնը պահանջեն : Այս ամենսին չեմ տարակուսիր ըսելու՝ որ աս աշխարհիս վրայ չկայ դաստիարակութիւն մը՝ որ հօրմէ մը , մօրմէ մը այնչափ խոհեմութիւն այնչափ նախատեսութիւն այնչափ ճարտարութիւն ու այնչափ աչալըջութիւն պահանջէ՝ ինչպէս այսպիսի խեղճ տղոց դաստիարակութիւնը :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱՒՕՍՈՒԹԻՒՆ 1

ՅՈՐԶԱՓ տեւեն սրբազան այն իրաւունք հարց և իշխանութիւն 'ի վերայ սերնդոց , ոչ դադարեցնեն 'ի նոցանէ և որդւոց իրաւացի պահանջը խնամարկութեան և հոգոց , խրատութեան և խորհրդովք : Օրի եթէ և 'ի դաստիարակութեն յանձնելոյ 'ի ձեռս օտարաց , նոյն պարտիք կան մնան 'ի վերայ ծնողաց , զի աւանդ են նոքա ուշոյ մտադրութեան նոցա հաւատացելք , քանի՞օն ապա 'ի կրկին դարձ նոցա 'ի գիրկս ծնողականս : Աս զի ըստ հասակին զարգանալոյ և ըստ մտացն խզելոյ կապանաց՝ յաճախեցին կուտեցին հոգք , եթէ զդաստիարակութեան ոք զարգասիս հարիւրապատիկս ցանկանայցէ քաղել 'ի նոցանէ :

Վանգի ընդ ամս բազմավաստակ դաստիարակութեան՝ վարժացն և վարժելոցն քրտնաթոր աշխատութիւն՝ ահօսաբեկ կակղեալ հարթ են զհողակոշտ անդաստանի մտաց մանկութեան , յորս վարդապետութիւնք և խրատք 'ի վերայ եկեալ՝ սերմունք են ծածկեալ խնամով , և երկարատե համբերութիւն երկուստեք՝ ոռոգմունք շահակտք , որով փթթեալ և ընծիւղեալ սերմանցն բարձրանան 'ի գիտութեանց և պատշաճից բոյս , և սերձագլուխ հասկօք առաքինութեանց զարդարին ոճք : Վեղեցիկ տեսիլ , վաստակոց ճգանց բիւրաբեղուն արգասիք : Այլ սակայն հնձողաց պէտք են յօգտից շահիցն բերեալք՝ քաղել զպտուղս և շտեմարանել 'ի համբարս մարդկութեան և հայրենեաց : Այս զայս ահա ծնողաց մանկտուոյն համարիմ և ժողովըղեան ազգին գործ : Այս եղունկ . զի եթէ անխոնջ մշակացն բազուկք և երկիրն ինքնին ոչ պակասեալ 'ի բազմաբեր արդեանցն , անփութութիւն միայն